ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՔԱԳՎ-ՄԱԾՁԲ-06/18

ք. Երևան «16» Ձեռագիր 2018թ.

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի Ա. Մանուկյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Չեխ Ավտո>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Մովսեսյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և 14.05.2013 թվականին կնքված N ՔԱԳՎ(1)-ՇՀԱՊՁԲ-11/21 պայմանագրի գնման առարկայի տեխնիկական բնութագրով նշված հետերաշխիքային սպասարկման գործող գներից 7% ցածր գնով և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման

արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը պայմանագրի գործողության ընթացքում չի կարող գերազանցել 695100 (վեց հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Առանձին Ծառայությունների միավորի գները ըստ ավտոմեքենաների տեսակների իրականացվում են Կատարողի հետ սույն պայմանագրի կնքման օրվանից հավելված 1.1-ում ներկայացված գործող գներից 7% ցածր գնով:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող*

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի Գլխավոր վարչության | «ՉԵԽ ԱՎՏՈ» ՍՊԸ |
| ք. Երևան 42 ,Զվարթնոցե օ/կ | ք. Երևան, Արշակունյաց 67/3 |
| ՀՎՀՀ 01204231 | <<Անելիք Բանկ>> ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 11816000080800 |
| Հ/Հ 900011207082 | ՀՎՀՀ 02250353 |
| Ա. Մանուկյան | Մ. Մովսեսյան |
| ---------------------------------------- (ստորագրություն) | ---------------------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 1*
*<< 16 >> Տարեկ 2018թ. կնքված*
*N ՔԱԳՎ-ՄԱԾՁԲ-06/18 ծածկագրով գնման պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չափաբաժին | Ավտոմեքենայի մակնիշը | Քանակը/հատ/ | Արտադրման տարեթիվը | Տ/Մ տեսակը | Նստատեղերի քանակը | Թափքի տեսակը | Քարշակման տեսակը | Շարժիչի | | | | | Վառելիքի տեսակը | Փոխանցման տուփը | Բաշխիչ տուփ | Կոնդիցիոներ | Ղեկի ուժեղարար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | տեսակը | տիպը, մխոցների դասավորումը | կափույրների քանակը | Բաշխիչ լիսեռների քանակը | ծավալը /լիտր/ | | | | | |
| 1 | ՇԿՈԴԱ ՌԱՊԻԴ | 2 | 2013 | Թեթև Մարդատար | 5 | ԼԻՖՏԲԵՔ | առջևի | ինժեկտորային ներմղմամբ | (R) 4 շարային | 16 | 2 | 1,4 | Բենզին | AT | չունի | + | + |

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր | |
|---|---|
| ***1.1*** Մատուցված ծառայությունների՝ կատարված աշխատանքների և տեղադրված պահեստամասերի համար որպես երաշխիքային ժամկետ սահմանվում է առնվազն 1 (մեկ) տարին՝ հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ ստորագրման պահից սկսած: ***1.2*** Մասնակիցը պարտավոր է տեխսպասարկման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պահեստամասերի բացակայության դեպքում՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ, խելամիտ ժամկետում ապահովել դրանց առկայությունը: ***1.3*** Մատուցված ծառայությունների երաշխիքային ժամկետի ընթացքում ծագած թերությունների շտկումները, կատարվող աշխատանքները և վերանորոգումները իրականացվում են կատարողի միջոցներով, անվճար և խելամիտ ժամկետներում: | |
| Ծառայության մատուցման ժամկետը | |
| Սկիզբը | ավարտը |
| Պայմանագրի ստորագրման օր | 15.12.2018թ. |

*Կատարողը ծառայությունները մատուցում է Կատարողի հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի
Գլխավոր վարչության
ք. Երևան 42 ,Զվարթնոցե օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011207082
Ա. Մանուկյան
------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
,ՉԵԽ ԱՎՏՈՆ ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 67/3
<<Անելիք Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11816000080800
ՀՎՀՀ 02250353
Մ. Մովսեսյան
------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1.1
<<16>> [illegible] 2018թ. կնքված
N ՔԱԳՎ-ՄԱԾՁԲ-06/18 ծածկագրով գնման պայմանագրի

| | SU-1, SU-2 մատուցվող աշխատանքների՝ ծառայությունների դրանց ընթացքում օգտագործվող հնարավոր պահեստամասերի և նյութերի անվանումները՝ ցանկը | Չափ. Միավ | Չափաբաժինները<br>1<br>ŠKODA<br>RAPID |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | **SU-1 ներառվող ծառայությունների անվանում** | | |
| | *Հետազոտման՝ ստուգման աշխատանքներ* | | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | հատ | 5000 |
| 2 | Կցորդման համակարգի ստուգում | հատ | 5000 |
| 3 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | հատ | 5000 |
| 4 | ABS համակարգի ստուգում | հատ | 5000 |
| 5 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | հատ | 5000 |
| 6 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | հատ | 5000 |
| | **SU-2 ներառվող ծառայությունների անվանում** | | |
| | 1. Շարժիչ | | |
| 7 | Շարժիչի հանում և տեղադրում | հատ | 40000 |
| 8 | Շարժիչի քանդում արատավորում և հավաքում | հատ | 100000 |
| 9 | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | հատ | 30000 |
| 10 | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով | հատ | 60000 |
| 11 | Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով | հատ | 30000 |
| 12 | Վառոցքի մոմի բնիկի նորոգում | հատ | 20000 |
| 13 | Շարժիչի բլոկի հղկում | հատ | 50000 |
| 14 | Փոկանիվի փոխարինում | հատ | 5000 |
| 15 | Շարժիչի շղթայի հանում և տեղադրում | հատ | 15000 |
| 16 | Շարժիչի շղթայի փոխարինում | հատ | 30000 |
| 18 | Յուղի մղիչի շղթայի փոխարինում | հատ | 20000 |
| 19 | Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում) | հատ | 20000 |
| 20 | Շարժիչի քարտերի փոխարինում | հատ | 15000 |
| 21 | Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում | հատ | 15000 |
| 22 | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում | հատ | 15000 |
| 23 | Շարժիչի յուղի մղիչի փոխարինում | հատ | 15000 |
| 24 | Յուղի ծորակի փոխարինում | հատ | 20000 |

| | | | |
|---|---|---|---|
| 25 | Օդաքաշակ փողրակի փոխարինում | հատ | 5000 |
| 26 | Շարժիչի տուրբոմղիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 40000 |
| 27 | Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում | հատ | 15000 |
| 28 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 25000 |
| | Շարժիչի բարձիկի փոխարինում | հատ | 15000 |
| 29 | Ուղղորդիչ վռանների փոխարինում | հատ | 20000 |
| 30 | Թափանիվի հանում և տեղադրում | հատ | 60000 |
| 31 | Թափանիվի փոխարինում | հատ | 10000 |
| 32 | Շարժիչի կափույրի փոխարինում | հատ | 10000 |
| 33 | Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում | հատ | 5000 |
| 34 | Ատամնանիվի փոխարինում | հատ | 5000 |
| 35 | Ատամնանիվի փոկի փոխարինում | հատ | 5000 |
| 36 | Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում | հատ | 5000 |
| 37 | Սուխարիկ փոխարինում | հատ | 5000 |
| 38 | Շարժիչի կալունի փոխարինում | հատ | 5000 |
| 39 | Շարժիչի հանդարտիչի փոխարինում | հատ | 10000 |
| 40 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում | հատ | 10000 |
| 41 | Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում | հատ | 5000 |
| 42 | Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 20000 |
| 43 | Շարժիչի յուղի արանքաչափիչի իրանի փոխարինում | հատ | 3000 |
| 44 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում | հատ | 10000 |
| 45 | Շարժիչի փոկի ձգիչի նորոգում | հատ | 5000 |
| 46 | Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում | հատ | 10000 |
| 47 | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում | հատ | 60000 |
| 48 | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում | հատ | 20000 |
| | **2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | |
| 49 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | հատ | 0 |
| 50 | Համակարգչային ախտորոշում | հատ | 5000 |
| 51 | Էլ. թերության վերացում | հատ | 30000 |
| 52 | Յուղի ռադիատորի փոխարինում | հատ | 25000 |
| 53 | Յուղի զտիչի փականի փոխարինում | հատ | 2000 |
| 54 | Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 40000 |
| 55 | Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 40000 |
| 56 | Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում | հատ | 5000 |
| 57 | Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում | հատ | 5000 |
| 58 | Վառելիքի փողրակի փոխարինում | հատ | 5000 |
| 59 | Վառոցքի մոմի փոխարինում | հատ | 10000 |
| 60 | Վառելիքի զտիչի փոխարինում | հատ | 2000 |
| 61 | Օդի զտիչի փոխարինում | հատ | 1000 |
| 62 | Կոնդիցիոների զտիչի փոխարինում | հատ | 1000 |
| 63 | Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 5000 |

| | | | |
|---|---|---|---|
| 64 | Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում | հատ | 2000 |
| 65 | Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում | հատ | 2000 |
| 66 | Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում | հատ | 2000 |
| 67 | Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 60000 |
| 68 | Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում | հատ | 15000 |
| 69 | Ինժեկտորի բոցամուղերի մաքրում | հատ | 20000 |
| 70 | Բոցամուղի կոդավորում | հատ | 20000 |
| 71 | Բենզամղիչի փոխարինում | հատ | 30000 |
| 72 | Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 73 | Բռնկման կարգավորում | հատ | 20000 |
| 74 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 75 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | հատ | 50000 |
| 76 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 20000 |
| 77 | Վառելիքի բաքի մաքրում | հատ | 10000 |
| 78 | Արագարարի ոտնակի փոխարինում | հատ | 5000 |
| 79 | Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում | հատ | 5000 |
| 80 | Օդի ծախսի տվիչի փոխարինում | հատ | 5000 |
| 81 | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում | հատ | 5000 |
| 82 | Ջրի խողովակի, փողրակի փոխարինում | հատ | 10000 |
| 83 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | հատ | 10000 |
| 84 | Տվիչի փոխարինում | հատ | 20000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | |
| 85 | Յովհարի հանում և տեղադրում | հատ | 35000 |
| 86 | Յովհարի փոխարինում | հատ | 10000 |
| 87 | Յովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 5000 |
| 88 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 35000 |
| 89 | Ռադիատորի շրջանակի փոխարինում | հատ | 5000 |
| 90 | Ռադիատորի կալունակի փոխարինում | հատ | 5000 |
| 91 | Ռադիատորի փողրակի փոխարինում | հատ | 10000 |
| 92 | Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 15000 |
| 93 | Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 5000 |
| 94 | Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում | հատ | 5000 |
| 95 | Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում | հատ | 40000 |
| 96 | Կոնդիցիոների ռադիատորի նորոգում | հատ | 20000 |
| 97 | Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում | հատ | 10000 |
| 98 | Ընդարձակող բաքի փոխարինում | հատ | 5000 |
| 99 | Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում | հատ | 5000 |
| 100 | Ջրի ծորակի փոխարինում | հատ | 5000 |
| 101 | Կոնդիցիոների ֆրեոնի լիցքավորում | հատ | 15000 |
| 102 | Յովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում | հատ | 10000 |
| 103 | Յովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 20000 |

| | | | |
|---|---|---|---|
| 104 | Յովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 105 | Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 30000 |
| 106 | Վառարանի ռադիատորի փոխարինում | հատ | 15000 |
| 107 | Վառարանի ռադիատորի նորոգում | հատ | 20000 |
| 108 | Վառարանի շարժիչի փոխարինում | հատ | 30000 |
| 109 | Թերմոստատի փոխարինում | հատ | 30000 |
| 110 | Ջրի մղիչի փոխարինում միջադիրով | հատ | 35000 |
| 111 | Ջրի մղիչի միջադիրի փոխարինում | հատ | 5000 |
| 112 | Գեներատորի փոկի փոխարինում | հատ | 7000 |
| 113 | Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում | հատ | 10000 |
| 114 | Ջրի ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 35000 |
| 115 | Թերմոստատի միջադիրի փոխարինում | հատ | 5000 |
| 116 | Սառեցման համակարգի օդահանում | հատ | 3000 |
| 117 | Խլարարի փոխարինում | հատ | 20000 |
| 118 | Խլարարի հանում և տեղադրում | հատ | 20000 |
| 119 | Խլարարի խողովակի փոխարինում | հատ | 5000 |
| 120 | Խլարարի անուրի փոխարինում | հատ | 5000 |
| 121 | Խլարարի ներդիրի փոխարինում | հատ | 5000 |
| 122 | Խլարարի կախոցի փոխարինում | հատ | 5000 |
| 123 | Կալունակի փոխարինում | հատ | 5000 |
| 124 | Ռեզոնատորի փոխարինում | հատ | 5000 |
| 125 | Յովացման հեղուկի փոխարինում | հատ | 3000 |
| | 4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ | | |
| 126 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում | հատ | 40000 |
| 127 | ԱՓՏ-ի քանդում,արատավորում, հավաքում | հատ | 40000 |
| 128 | ԱՓՏ-ի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 20000 |
| 129 | ԱՓՏ-ի փոխարինում | հատ | 30000 |
| | ԱՓՏ-ի ծրագրավորում | հատ | 15000 |
| 130 | Վազքաչափի շարժաբերի փոխարինում | հատ | 5000 |
| 131 | ԱՓՏ-ի յուղի փոխարինում | հատ | 20000 |
| | 5. Առջևի և հետևի կամրջակներ | | |
| 132 | Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 133 | Յետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 30000 |
| 134 | Յետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում | հատ | 20000 |
| 135 | Յետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում | հատ | 10000 |
| 136 | Յետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 15000 |
| | 7. Կախոց | | |
| 137 | Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 40000 |
| 138 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 8000 |
| 139 | Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում | հատ | 10000 |

| | | | |
|---|---|---|---|
| 140 | Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 141 | Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 142 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | հատ | 10000 |
| 143 | Անվակունդի գամասեղի կամ հեղյուսի փոխարինում | հատ | 1000 |
| 144 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | հատ | 10000 |
| 145 | Ցնցամեղմիչի առանցքակալի փոխարինում | հատ | 10000 |
| 146 | Առջևի զսպանակի փոխարինում | հատ | 5000 |
| 147 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 148 | Հարվածամեղմիչի վռանի փոխարինում | հատ | 5000 |
| 149 | Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 15000 |
| 150 | Ներքևի լծակի վռանի փոխարինում | հատ | 5000 |
| 151 | Ներքևի լծակի հեղույսի փոխարինում | հատ | 1000 |
| 152 | Հարվածիչի (բարձիկի փոխարինում) | հատ | 3000 |
| 153 | Անիվների պաշտպանիչի փոխարինում | հատ | 3000 |
| 154 | Շարժիչի պաշտպանիչի փոխարինում | հատ | 5000 |
| 155 | Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 5000 |
| 156 | Վերևի լծակի վռանների փոխարինում | հատ | 3000 |
| 157 | Վերևի լծակի հեղույսի փոխարինում | հատ | 1000 |
| 158 | Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում | հատ | 5000 |
| 159 | Գնդե հոդակապի պատյանի փոխարինում | հատ | 8000 |
| 160 | Գնդե հոդակապի հանում և տեղադրում | հատ | 8000 |
| 161 | Գնդե հոդակապի փոխարինում | հատ | 8000 |
| 162 | Գնդե հոդակապի նորոգում | հատ | 8000 |
| 163 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 20000 |
| 164 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | հատ | 5000 |
| 165 | Առջևի կայունարարի կալունակի փոխարինում | հատ | 3000 |
| 166 | Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում | հատ | 3000 |
| 167 | Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում | հատ | 8000 |
| 168 | Հետևի կայունարարի վռանի փոխարինում | հատ | 5000 |
| 169 | Հետևի զսպանակի փոխարինում | հատ | 3000 |
| 170 | Հետևի ցնցամեղմիչի փոխարինում | հատ | 10000 |
| 171 | Հետևի հարվածամեղմիչի վռանի փոխարինում | հատ | 5000 |
| 172 | Հետևի կախոցի սայլենտ-բլոկի փոխարինում | հատ | 10000 |
| | 8. Ղեկային մեխանիզմ | | |
| 173 | Ղեկային կալունի ձգանների փոխարինում | հատ | 8000 |
| 174 | Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում | հատ | 8000 |
| 175 | ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 8000 |
| 176 | Ղեկային ձգաձողի ձգանի հանում և տեղադրում | հատ | 8000 |
| 177 | Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 178 | Ղեկային ձգաձողի ծայրակալի փոխարինում | հատ | 4000 |
| 179 | Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում | հատ | 5000 |
| | 9. Արգելակային համակարգ | | |

| | | | |
|---|---|---|---|
| 180 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 5000 |
| 181 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 5000 |
| 182 | Առջևի սուպպորտի վերանորոգում | հատ | 3000 |
| 183 | Հետևի սուպպորտի վերանորոգում | հատ | 3000 |
| 184 | Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում | հատ | 10000 |
| 185 | Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում | հատ | 5000 |
| 186 | Արգելակային փողրակի փոխարինում | հատ | 5000 |
| 187 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | հատ | 0 |
| 188 | Արգելակային համակարգի օդահանում | հատ | 3000 |
| 189 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | հատ | 0 |
| 190 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | հատ | 7000 |
| 191 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | հատ | 7000 |
| 192 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 2000 |
| 193 | ABS-ի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 194 | ABS-ի տվիչի փոխարինում | հատ | 5000 |
| 195 | ABS-ի էլեկտրական հաղորդալարերի փոխարինում | հատ | 5000 |
| 196 | Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 20000 |
| 197 | Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում | հատ | 10000 |
| 198 | Ձեռքի արգելակի կոճղակների փոխարինում | հատ | 5000 |
| 199 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | հատ | 5000 |
| 200 | Ձեռքի արգելակի ճոպանի փոխարինում | հատ | 5000 |
| 201 | Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում | հատ | 5000 |
| 202 | Հետևի արգելակների կարգավորում | հատ | 5000 |
| 203 | Արգելակային համակարգի մաքրում | հատ | 2000 |
| 204 | Արգելակային հեղուկի փոխարինում | հատ | 3000 |
| | **10. էլեկտրասարքավորում** | | |
| 205 | Գեներատորի հանում,տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 206 | Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում | հատ | 10000 |
| 207 | Գեներատորի ստատորի փոխարինում | հատ | 5000 |
| 208 | Գեներատորի ռոտորի փոխարինում | հատ | 5000 |
| 209 | Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում | հատ | 5000 |
| 210 | Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում | հատ | 5000 |
| 211 | Գեներատորի առանցքակալի փոխարինում | հատ | 5000 |
| 212 | Գեներատորի փոկանիվի փոխարինում | հատ | 3000 |
| 213 | Ազդանշանային հարվածամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 2000 |
| 214 | Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում | հատ | 10000 |
| 215 | Մեկնարկիչի խարիսխի փոխարինում | հատ | 5000 |
| 216 | Մեկնարկիչի իրանի փոխարինում | հատ | 5000 |
| 217 | Մեկնարկիչի բռնիչի փոխարինում | հատ | 5000 |
| 218 | Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում | հատ | 10000 |
| 219 | Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում | հատ | 10000 |
| 220 | Մեկնարկիչի հետևի կափույրի փոխարինում | հատ | 5000 |

| | | | |
|---|---|---|---|
| 221 | Մեկնարկիչի ռելեի փոխարինում | հատ | 5000 |
| 222 | Մեկնարկիչի ածուխների փոխարինում | հատ | 5000 |
| 223 | Մեկնարկիչի պատյանի փոխարինում | հատ | 5000 |
| 224 | Ազդանշանի կարգավորում | հատ | 3000 |
| 225 | Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 5000 |
| | Լամպի փոխարինում | հատ | 5000 |
| 226 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | հատ | 5000 |
| 227 | Առջևի լապտերի փոխարինում | հատ | 5000 |
| 228 | Հակամշուշային լապտերի տեղադրում | հատ | 20000 |
| 229 | Լապտերի կենտրոնական փոխակերպիչի փոխարինում | հատ | 5000 |
| 230 | Սարքերի պանելի հանում և տեղադրում | հատ | 60000 |
| 231 | Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 2000 |
| 232 | Առջևի լապտերի կարգավորում | հատ | 2000 |
| 233 | Բռնկման կոճղեքի հանում և տեղադրում | հատ | 5000 |
| 234 | Բռնկման կոճղեքի հպակի փոխարինում | հատ | 5000 |
| 235 | Վառոցքի կոճի հանում և տեղադրում | հատ | 15000 |
| 236 | Ինդուկցիոն կոճի հանում և տեղադրում | հատ | 1000 |
| 237 | Լուսամփոփի լարերի փոխարինում | հատ | 5000 |
| 238 | Լուսամփոփի լարերի նորոգում | հատ | 10000 |
| 239 | Վազքաչափի փոխարինում | հատ | 5000 |
| 240 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | հատ | 10000 |
| 241 | Ապակելվացիչի  հանում և տեղադրում | հատ | 10000 |
| 242 | Ապակելվացիչի փոխարինում | հատ | 15000 |
| 243 | Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում | հատ | 10000 |
| 244 | Ապակելվացիչի շարժիչի փոխարինում | հատ | 15000 |
| 245 | Ջեռուցիչի շարժիչի փոխարինում | հատ | 10000 |
| 246 | Ջեռուցիչի շարժիչի հանում և տեղադրում | հատ | 20000 |
| 247 | Ջեռուցիչի օդի հոսքի կարգավորիչի փոխարինում | հատ | 10000 |
| 248 | Ջեռուցիչի օդի հոսքի կարգավորիչի նորոգում | հատ | 20000 |
| 249 | Ապահովիչների փոխարինում | հատ | 1000 |
| 250 | Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում | հատ | 20000 |
| 251 | Դռների էլ/փականի փոխարինում | հատ | 15000 |
| 252 | Ապակեամբարձիչի հանում և տեղադրում | հատ | 15000 |
| 253 | Ապակեամբարձիչի փոխարինում | հատ | 20000 |
| 254 | Ապակեամբարձիչի շարժիչի փոխարինում | հատ | 10000 |
| 255 | Մագնիտոլայի տեղադրում | հատ | 20000 |
| 256 | Էլեկտրական տվիչի փոխարինում | հատ | 10000 |
| 257 | Էլեկտրական անջատիչի փոխարինում | հատ | 10000 |
| 258 | Մարտկոցի փոխարինում | հատ | 3000 |
| 259 | Մարտկոցի կլեմաների փոխարինում | հատ | 2000 |
| 260 | Ակումլյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում | հատ | 3000 |
| 261 | Ակումլյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում | հատ | 3000 |
| 262 | Պարկտրոնիկի տեղադրում | հատ | 30000 |
| 263 | Էլ/հաղորդալարի մասնակի վերանորոգում | հատ | 20000 |

| | | | |
|---|---|---|---|
| 264 | էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի փոխարինում կամ նորոգում | հատ | 30000 |
| 265 | էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի փոխարինում կամ նորոգում | հատ | 20000 |
| 266 | Ավտոմեքենայի ալեհավաքի փոխարինում | հատ | 2000 |
| 267 | Ավտոմեքենայի ալեհավաքի նորոգում | հատ | 2000 |
| 268 | էլ/ կոճակի փոխարինում | հատ | 10000 |
| 269 | Փոխանջատիչ ղեկի փոխարինում | հատ | 5000 |
| 270 | Քսենոնի բլոկի հանում և տեղադրում | հատ | 5000 |
| 271 | Էլեկտրական շտեյկերի փոխարինում | հատ | 5000 |
| 272 | Էլեկտրական անջատիչի փոխարինում | հատ | 5000 |
| 273 | Վառոցքի լարերի խրձի փոխարինում | հատ | 10000 |
| 274 | Ջրի ցողիչի փոխարինում | հատ | 15000 |
| 275 | Բեռնախցիկի հարվածամեղմիչի փոխարինում | հատ | 5000 |
| 276 | Բամպերի փոխարինում | հատ | 5000 |
| 277 | Բամպերի կալունակի փոխարինում | հատ | 7000 |
| 278 | Բամպերի բալկայի փոխարինում | հատ | 10000 |
| 279 | Բամպերի պենոպլաստի փոխարինում | հատ | 5000 |
| 280 | Բեռնախցիկի փոխարինում | հատ | 15000 |
| 281 | Բեռնախցիկի նորոգում | հատ | 25000 |
| 282 | Բեռնախցիկի փականի փոխարինում | հատ | 10000 |
| 283 | Բեռնախցիկի ռետինի փոխարինում | հատ | 20000 |
| 284 | Դռան պաստառի փոխարինում | հատ | 15000 |
| 285 | Յագոցի փականի փոխարինում | հատ | 10000 |
| | **11. Ավտոմեքենայի սրահ** | | |
| 286 | Տաքացուցչի ղեկավարման բլոկի հանում, տեղադրում կամ փոխարինում | հատ | 30000 |
| 287 | Տաքացուցիչ ռադիատորի հանում,տեղադրում կամ փոխարինում | հատ | 20000 |
| 288 | Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 289 | Դռան պաստառի հանում և տեղադրում | հատ | 20000 |
| 290 | Նստարանի հանում տեղադրում կամ փոխարինում | հատ | 10000 |
| 291 | Ապակիների մգեցում | հատ | 60000 |
| 292 | Դռան փականի փոխարինում | հատ | 10000 |
| 293 | Առջևի ցայտապաշտպանիչի հանում, տեղադրում կամ փոխարինում | հատ | 2000 |
| 294 | Յետևի ցայտապաշտպանիչի փոխարինում | հատ | 5000 |
| 295 | Արևիկի փոխարինում | հատ | 10000 |
| 296 | Դռան ծխնիի փոխարինում | հատ | 5000 |
| 297 | Ծխնի հագոցի փոխարինում | հատ | 5000 |
| 298 | Դռների դրսի բռնակի փոխարինում | հատ | 5000 |
| 299 | Դռների ներսի բռնակի փոխարինում | հատ | 5000 |
| 300 | Դռան ապակիների մղղինցի փոխարինում | հատ | 10000 |
| 301 | Դռների ռետինների փոխարինում | հատ | 20000 |
| 302 | Դռների ապակիների ռետինների փոխարինում | հատ | 20000 |
| 303 | Առջևի դռան մղղինցի փոխարինում | հատ | 5000 |
| 304 | Յետևի դռան մղղինցի փոխարինում | հատ | 5000 |

| | | | |
|---|---|---|---|
| 305 | Լամպի փոխարինում | հատ | 5000 |
| 306 | Պաշտպանիչ անձրևի և քամու տեղադրում կամ փոխարինում | հատ | 20000 |
| 307 | Ամրակի փոխարինում | հատ | 1000 |
| 308 | Համարանիշի պլաստմասսայի փոխարինում | հատ | 1000 |
| 309 | Դիմապակու փոխարինում | հատ | 30000 |
| | **12. Այլ ծառայություններ** | | |
| 310 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում *գին 1 մ/քառ-ի համար* | հատ | 50000 |
| 311 | Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում *գին 1 կտորի համար* | հատ | 20000 |
| 312 | Եռակցման աշխատանքներ *գին 1սմ (գծ.մ) համար* | հատ | 5000 |
| 313 | Խառատային աշխատանքներ *գին 1 կտորի համար* | հատ | 5000 |
| 314 | Փականագործական աշխատանքներ *գին 1 ժամ աշխատանքի համար* | հատ | 7000 |
| 315 | Ավտոմեքենայի լվացում | հատ | 5000 |
| 316 | Ավտոմեքենայի շարժիչի լվացում | հատ | 10000 |
| 317 | Անվաբացքի կարգավորում | հատ | 10000 |
| 318 | Կոնդիցիոների լիցքավորում | հատ | 25000 |
| 319 | Կոնդիցիոների յուղի ավելացում | հատ | 5000 |
| 320 | Անիվի հանում և տեղադրում | հատ | 1500 |
| 321 | Անվահեցի նորոգում | հատ | 20000 |
| 322 | Անվադողի վերանորոգում | հատ | 10000 |
| 323 | Անվադողի քանդում հավաքում | հատ | 1000 |
| 324 | Անիվի բալանսավորում | հատ | 1000 |
| 325 | Անիվի վալց | հատ | 15000 |
| 326 | Ավտոմեքենայի սրահի չոր քիմ մաքրում | հատ | 30000 |
| 327 | Քարշակի ծառայություն *գին 1կմ համար* | հատ | 1000 |
| 328 | Ավտոմեքենայի հագոցի փոխարինում | հատ | 10000 |
| 329 | Ավտոմեքենայի հագոցատակի փոխարինում | հատ | 25000 |
| 330 | Ավտոմեքենայի կողային ապակու փոխարինում | հատ | 15000 |
| 331 | Ավտոմեքենայի հետևի ապակու փոխարինում | հատ | 15000 |
| 332 | Ավտոմեքենայի հետևի կողային ապակու փոխարինում | հատ | 20000 |
| 333 | Ավտոմեքենայի հետևի շարժական կողային ապակու փոխարինում | հատ | 15000 |
| 334 | Ավտոմեքենայի հետևի անշարժ կողային ապակու փոխարինում | հատ | 25000 |
| 335 | Ավտոմեքենայի դռան փոխարինում | հատ | 15000 |

## ՏՍ ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները

| | | | |
|---|---|---|---|
| | **1.Շարժիչ** | | |
| 1 | Շարժիչի բլոկ | հատ | 1924000 |
| 2 | Շարժիչի գլխիկ | հատ | 1646000 |
| 3 | Բարձիկ | հատ | 90000 |
| 4 | Շարժիչի գլխիկի միջադիր | հատ | 35000 |
| 5 | Շարժիչի միջադիրների կոմպլեկտ | հատ | 20000 |
| 6 | Շարժիչի փականի դուրս մղող | հատ | 22000 |
| 7 | Շարժիչի փականի ներս մղող | հատ | 22000 |

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Շարժիչի փականի խտաբուկ 1 կ-տ | հատ | 30000 |
| 9 | Փականի զսպանակ | հատ | 5000 |
| 10 | Ծնկաձև լիսեռ | հատ | 518000 |
| 11 | Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի | հատ | 20000 |
| 12 | Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի | հատ | 10000 |
| 13 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ 1 կ-տ | հատ | 60000 |
| 14 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ 1 կ-տ | հատ | 20000 |
| 15 | Հենակային տափօղակ 1 կ-տ | հատ | 10000 |
| 16 | Մխոց 1 հատ | հատ | 155000 |
| 17 | Մխոցային օղակներ 1 կ-տ | հատ | 40000 |
| 18 | Շարժիչի տուրբոմղիչ | հատ | 1140000 |
| 19 | Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչ | հատ | 100000 |
| 20 | Շարժիչի կափույր | հատ | 100000 |
| 21 | Շարժիչի կափույրի կափարիչ | հատ | 160000 |
| 22 | Շարժիչի շղթա երկար | հատ | 64000 |
| 23 | Շարժիչի պաշտպանիչ | հատ | 181000 |
| 24 | Զգան | հատ | 10000 |
| 25 | Հրիչ | հատ | 45000 |
| 26 | Շարժիչի հիդրոհրիչ | հատ | 24000 |
| 27 | Շարժիչի կալուն | հատ | 24000 |
| 28 | Շարժիչի հանդարտիչ | հատ | 26000 |
| 29 | Շարժիչի հոլովակ | հատ | 40000 |
| 30 | Շարժիչի հոլովակի առանցքակալ | հատ | 10000 |
| 31 | Շարժիչի առջևի կափարիչ | հատ | 250000 |
| 32 | Շարժիչի վերևի կափարիչ | հատ | 413000 |
| 33 | Շարժիչի վերևի կափարիչի միջադիր | հատ | 16000 |
| 34 | Թափանիվ | հատ | 20000 |
| 35 | Շարժաթև | հատ | 20000 |
| 36 | Ատամնանիվ բաշխիչ լիսեռի | հատ | 20000 |
| 37 | Ատամնանիվ ծնկաձև լիսեռի | հատ | 20000 |
| 38 | Փոկանիվ | հատ | 43000 |
| 39 | Շղթա յուղի մղիչի | հատ | 41000 |
| 40 | Սուլխարիկ փականի | հատ | 4000 |
| 41 | Գլխիկի բոլտ | հատ | 2000 |
| 42 | Ծնկաձև լիսեռի բոլտ | հատ | 2000 |
| 43 | Պարկուճ 1 կ/տ | հատ | 2000 |
| 44 | Կարտեր | հատ | 118000 |
| 45 | Փական յուղի տարայի | հատ | 10000 |
| 46 | Խուփ ընդարձակման բակի | հատ | 10000 |
| 47 | Խուփ շարժիչի | հատ | 20000 |
| 48 | Թաքիկ յուղի մղիչի | հատ | 26000 |
| 49 | Բարձիկ փ/տուփի 1 հատ | հատ | 80000 |
| 50 | Միջադիր յուղի մղիչի | հատ | 2500 |
| 51 | Շարժիչի յուղի արանքաչափիչ | հատ | 26000 |

| | | | |
|---|---|---|---|
| 52 | Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան | հատ | 20000 |
| 53 | Շարժիչի գամասեղ | հատ | 10000 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | |
| 54 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ 10W40, *1 լիտր* | Լիտր | 6000 |
| 55 | Յուղ շարժիչի սինթետիկ 5W40, *1 լիտր* | Լիտր | 8500 |
| 56 | Յուղ շարժիչի սինթետիկ 5W30, 1 լիտր | Լիտր | 9500 |
| 57 | Յուղման համակարգի լվացման հեղուկ *1 լիտր* | Լիտր | 3000 |
| 58 | Ինժեկտորի մաքրման հեղուկ | հատ | 3000 |
| 59 | Կոնդիցիոների զտիչ | հատ | 12000 |
| 60 | Յուղի զտիչ | հատ | 7400 |
| 61 | Փականի յուղի զտիչի | հատ | 5000 |
| 62 | Յուղի մղիչ | հատ | 121000 |
| 63 | Յուղի պոմպի շարժաբեր | հատ | 11000 |
| 64 | Յուղի ռադիատոր | հատ | 137000 |
| 65 | Յուղի փողրակ | հատ | 20000 |
| 66 | Յուղի ծորակ | հատ | 5000 |
| 67 | Վառոցքի կոճ | հատ | 20000 |
| 68 | Արտածման կալեկտոր | հատ | 1140000 |
| 69 | Ներածման կալեկտոր աջ | հատ | 150000 |
| 70 | Ներածման կալեկտոր ձախ | հատ | 150000 |
| 71 | Արտածման կալեկտորի աջ միջադիր | հատ | 10000 |
| 72 | Արտածման կալեկտորի ձախ միջադիր | հատ | 6000 |
| 73 | Ներածման կալեկտորի աջ միջադիր | հատ | 7000 |
| 74 | Ներածման կալեկտորի ձախ միջադիր | հատ | 7000 |
| 75 | Վառոցքի մոմ | հատ | 12000 |
| 76 | Վառոցքի կոճ | հատ | 20000 |
| 77 | Բենզոմղիչ | հատ | 111000 |
| 78 | Բենզոբաք | հատ | 400000 |
| 79 | Բենզոբաքի կափարիչ | հատ | 40000 |
| 80 | Վառելանյութի մղիչ | հատ | 140000 |
| 81 | Վառելանյութի զտիչ | հատ | 19000 |
| 82 | Վառելանյութի ցայտիչ | հատ | 110000 |
| 83 | Վառելիքի մղիչի խողովակ | հատ | 41000 |
| 84 | Վառելանյութի փողրակ | հատ | 10000 |
| 85 | Վառելանյութի խողովակ միջին | հատ | 10000 |
| 86 | Վառելանյութի խողովակ | հատ | 20000 |
| 87 | Արագարարի ոտնակ | հատ | 83000 |
| 88 | Արագարարի տվիչ | հատ | 11000 |
| 89 | Օդի զտիչ | հատ | 12000 |
| 90 | Օդի ծախսաչափիչ | հատ | 290000 |
| 91 | Օդաքաշի փողրակ | հատ | 20000 |
| 92 | Օդի ծախսաչափիչի փողրակ | հատ | 30000 |
| 93 | Օդի զտիչի փողրակ | հատ | 10000 |
| 94 | Պատյան օդի զտիչի | հատ | 102000 |

| | | | |
|---|---|---|---|
| 95 | Ջերմաստիճանային տվիչ | հատ | 22000 |
| 96 | Յուղի տվիչ | հատ | 60000 |
| 97 | Բաշխիչ լիսեռի տվիչ | հատ | 20000 |
| 98 | Արագաչափի տվիչ | հատ | 20000 |
| 99 | Յովհարի տվիչ | հատ | 22000 |
| 100 | Ջրի խողովակ երկար | հատ | 20000 |
| 101 | Ջրի խողովակ կարճ | հատ | 20000 |
| 102 | Ջրի տվիչ | հատ | 22000 |
| 103 | Բենզոբաքի տվիչ | հատ | 70000 |
| 104 | Ղեկավարման համակարգիչ | հատ | 420000 |
| 105 | Դրոսելային փականի տվիչ | հատ | 40000 |
| 106 | Թթվածնի տվիչ | հատ | 40000 |
| 107 | Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկ | հատ | 922000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | |
| 108 | Յովհար | հատ | 133000 |
| 109 | Յովհարի թևանիվ աջ | հատ | 35000 |
| 110 | Յովհարի թևանիվ ձախ | հատ | 11000 |
| 111 | Ռադիատոր | հատ | 120000 |
| 112 | Ռադիատորի կալունակ աջ | հատ | 7000 |
| 113 | Ռադիատորի կալունակ ձախ | հատ | 7000 |
| 114 | Ընդարձակող բաքի փական | հատ | 10000 |
| 115 | Ընդարձակող բաքի փողրակ | հատ | 3000 |
| 116 | Ընդարձակող բաք | հատ | 14000 |
| 117 | Ռադիատորի փողրակ ներքևի | հատ | 30000 |
| 118 | Ռադիատորի փողրակ վերևի | հատ | 15000 |
| 119 | Թերմոստատ | հատ | 32000 |
| 120 | Ջրի մղիչ | հատ | 80000 |
| 121 | Ջրի մղիչի միջադիր | հատ | 1000 |
| 122 | Ջրի պոմպի խտաբուկ | հատ | 3000 |
| 123 | Ջրի պոմպի առանցքակալ | հատ | 20000 |
| 124 | Սառեցման հեղուկ *60oC* | լիտր | 3500 |
| 125 | Չսառչող հեղուկ ապակիների համար 65oC | լիտր | 600 |
| 126 | Զգիչ հոլովակի | հատ | 43000 |
| 127 | Փոկ մեծ | հատ | 20000 |
| 128 | Կոնդիցիոների կոմպրեսոր | հատ | 614000 |
| 129 | Կոնդիցիոների ռադիատորի փողրակ | հատ | 110000 |
| 130 | Յովացման համակարգի ռետինե խողովակ | հատ | 60000 |
| 131 | Կոնդիցիոների ռադիատոր | հատ | 120000 |
| 132 | Կոնդիցիոների յուղ | հատ | 3000 |
| 133 | Կոնդիցիոների կալունակ | հատ | 40000 |
| 134 | Ծորակ | հատ | 20000 |
| 135 | Փոկանիվ գեներատորի փոկի | հատ | 20000 |
| 136 | Պատյան թերմոստատի | հատ | 122000 |
| 137 | Միջադիր թերմոստատի | հատ | 2000 |

| | | | |
|---|---|---|---|
| 138 | Խլարարի ներդիր | հատ | 5000 |
| 139 | Խլարարի կախոց | հատ | 10000 |
| 140 | Կրոնշտեյն | հատ | 20000 |
| 141 | Խլարարի անուր (Խամուտ) | հատ | 14000 |
| 142 | Շարժիչ վառարանի | հատ | 100000 |
| 143 | Վառարանի ռադիատոր | հատ | 100000 |
| | 4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ | | |
| 144 | Ավտոմատ փոխանցման տուփ | հատ | 3400000 |
| 145 | ԱՓՏ յուղ | լիտր | 11000 |
| 146 | ԱՓՏ-ի պատյան | հատ | 30000 |
| 147 | ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու | հատ | 450000 |
| 148 | Հերմետիկ | հատ | 1000 |
| | 5. Առջևի և հետևի կամրջակներ | | |
| 149 | Հետևի  կամրջակ | հատ | 608000 |
| | | | |
| 150 | Տրավերս | հատ | 240000 |
| 151 | Կալունակ | հատ | 20000 |
| 152 | Ձախ կամ աջ հողակապ | հատ | 202000 |
| 153 | Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց | հատ | 20000 |
| 154 | Առջևի անիվի անվակունդ | հատ | 93000 |
| 155 | Հետևի անիվի անվակունդ | հատ | 41000 |
| 156 | Մանեկ անիվի | հատ | 2000 |
| 157 | Գամասեղ անիվի | հատ | 2000 |
| 158 | Հեղյուս անիվի | հատ | 2000 |
| 159 | Անվակունդի խտաբուկ | հատ | 2000 |
| 160 | Ձախ կամ աջ հողակապի խտաբուկ | հատ | 2000 |
| 161 | Հարվածամեղմիչի հենարան | հատ | 11000 |
| 162 | Հարվածամեղմիչի առանցքակալ | հատ | 5000 |
| 163 | Վռան թափքի | հատ | 12000 |
| 164 | Վռան հեծանի | հատ | 10000 |
| 165 | Կալունակ կայունարարի վռանի | հատ | 20000 |
| 166. | Բռունցք առջևի | հատ | 100000 |
| 167 | Բռունցք հետևի | հատ | 100000 |
| 168 | Փոշեթիկնոց առջևի հարվածամեղմիչի | հատ | 10000 |
| 169 | Փոշեթիկնոց հետևի հարվածամեղմիչի | հատ | 10000 |
| 170 | Վռան զսպակի | հատ | 12000 |
| 171 | Միջադիր զսպակի | հատ | 7000 |
| 172 | Առջևի  զսպանակ | հատ | 53000 |
| 173 | Հետևի զսպանակ | հատ | 63000 |
| 174 | Առջևի հարվածամեղմիչ | հատ | 70000 |
| 175 | Հարվածամեղմիչի վռան | հատ | 9000 |
| 176 | Հեղույս լծակի | հատ | 2000 |
| 177 | Վերևի լծակ | հատ | 50000 |
| 178 | Վերևի լծակի վռան | հատ | 14000 |

| | | | |
|---|---|---|---|
| 179 | Հետևի վերևի լծակի վռան | հատ | 20000 |
| 180 | Գնդե հոդակապ | հատ | 26000 |
| 181 | Առջևի կայունարար | հատ | 50000 |
| 182 | Առջևի կայունարարի վռան | հատ | 2700 |
| 183 | Առջևի կայունարարի կալունակ | հատ | 5000 |
| 184 | Առջևի կայունարարի կանգնակ | հատ | 18000 |
| 185 | Հետևի կայունարարի վռան | հատ | 20000 |
| 186 | Հետևի զսպանակ | հատ | 61000 |
| 187 | Հետևի ցնցամեղմիչ | հատ | 40000 |
| 188 | Հետևի հարվածամեղմիչի վռան | հատ | 10000 |
| 189 | Հետևի ծգածող | հատ | 20000 |
| 190 | Հետևի կախոցի սայլենտ-բլոկ | հատ | 20000 |
| 191 | Հետևի անկյունագծային լծակ | հատ | 80000 |
| 192 | Անկյունագծային լծակի վռան | հատ | 6000 |
| 193 | Հետևի կայունարարի վռան | հատ | 5000 |
| 194 | Հետևի կայունարարի կալունակ | հատ | 5000 |
| 195 | Անվահեծ | հատ | 120000 |
| | **8. Ղեկային մեխանիզմ** | | |
| 196 | Ղեկասյունակի ամրացման անուր | հատ | 2000 |
| 197 | Ղեկասյունակ | հատ | 740000 |
| 198 | Ղեկասյունակի խաչուկ | հատ | 5000 |
| 199 | Ղեկասյունակի պատյան | հատ | 15000 |
| 200 | Վռան ղեկասյունակի | հատ | 6000 |
| 201 | Ղեկասյունակի վերանորոգման հավաքածու | հատ | 100000 |
| 202 | Հիդրոուժեղարարի մղիչ | հատ | 425000 |
| 203 | Բաք հիդրոուժեղարարի | հատ | 10000 |
| 204 | Ղեկ կոմպլեկտավորված | հատ | 350000 |
| 205 | Ղեկային ձող | հատ | 300000 |
| 206 | Ղեկային ձողի ծայրակալ | հատ | 15000 |
| 207 | Ղեկային ձողի ծգան | հատ | 40000 |
| 208 | Ղեկային ձողի փոշեթիկնոց | հատ | 14000 |
| 209 | Հիդրոուժեղարարի յուղ | լիտր | 9500 |
| | **9. Արգելակային համակարգ** | | |
| 210 | Գլխ. գլան | հատ | 134000 |
| 211 | Վակուումային ուժեղարար | հատ | 165000 |
| 212 | Աշխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | հատ | 100000 |
| 213 | Արգելակային փողրակ | հատ | 14000 |
| 214 | Սուպորտ արգելակման առջևի | հատ | 93000 |
| 215 | Սուպորտ արգելակման հետևի | հատ | 116000 |
| 216 | Սուպպորտի մանժետ | հատ | 9000 |
| 217 | Սուպպորտի ուղղորդիչ | հատ | 10000 |
| 218 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | հատ | 40000 |
| 219 | Հետևի սկավառակային կոճղակ | հատ | 35000 |
| 220 | Արգելակային սեղմակ | հատ | 20000 |

| | | | |
|---|---|---|---|
| 221 | Առջևի արգելակային սկավառակ | հատ | 46000 |
| 222 | Հետևի արգելակային սկավառակ | հատ | 27000 |
| 223 | ABS համակարգ | հատ | 966000 |
| 224 | ABS- ի տվիչ | հատ | 43000 |
| 225 | ABS- ի լար | հատ | 46000 |
| 226 | Ձեռքի արգելակի ճոպան | հատ | 13000 |
| 227 | Արգելակային հեղուկ | լիտր | 4000 |
| | 10. Էլեկտրասարքավորում | | |
| 228 | Գեներատոր | հատ | 447000 |
| 229 | Գեներատորի ռելե | հատ | 73000 |
| 230 | Գեներատորի փոկանիվ | հատ | 55000 |
| 231 | Գեներատորի առանցքակալ | հատ | 45000 |
| 232 | Մեկնարկիչ | հատ | 278000 |
| 233 | Մեկնարկիչի խարիսխ | հատ | 30000 |
| 234 | Մեկնարկիչի իրան | հատ | 30000 |
| 235 | Մեկնարկիչի ռելե | հատ | 30000 |
| 236 | Մեկնակիչի ածուխ 1կ-տ | հատ | 20000 |
| 237 | Բենդեքս | հատ | 20000 |
| 238 | Մեկնակիչի կցորդիչ (ավտոմատ) | հատ | 86000 |
| 239 | Առջևի լապտեր | հատ | 102000 |
| 240 | Առջևի քարթիչ | հատ | 20000 |
| 241 | Հակամշուշային լապտեր | հատ | 40000 |
| 242 | Հետևի լապտեր | հատ | 70000 |
| 243 | Հետևի քարթիչ | հատ | 42000 |
| 244 | Արգելակային լապտեր | հատ | 28000 |
| 245 | Խցիկի լապտեր | հատ | 25000 |
| 246 | Խցիկի լապտերի լամպ | հատ | 2000 |
| 247 | Արգելակային լապտերի լամպ | հատ | 2000 |
| 248 | Առջևի լապտերի լամպ | հատ | 5000 |
| 249 | Հետևի լապտերի լամպ | հատ | 2000 |
| 250 | Հակամշուշային լապտերի լամպ | հատ | 15000 |
| 251 | Արգելակային լապտերի լամպ | հատ | 15000 |
| 252 | Լամպ քսենոն | հատ | 60000 |
| 253 | Բլոկ քսենոնի | հատ | 100000 |
| 254 | Էլեկտրական շտեկեր | հատ | 5000 |
| 255 | Ապահովիչ | հատ | 1000 |
| 256 | Բռնկման կոդպեք | հատ | 50000 |
| 257 | Բռնկման կողպեքի հպակ | հատ | 50000 |
| 258 | Ակումլյատորի դրական էլեկտրոլար | հատ | 10000 |
| 259 | Ակումլյատորի բացասական էլեկտրոլար | հատ | 10000 |
| 260 | Ապակեմաքրիչ | հատ | 50000 |
| 261 | Ապակելվացիչի շարժիչ | հատ | 33000 |
| 262 | Ապակեմաքրիչի բաքիկ | հատ | 50000 |
| 263 | Ապակեմաքրիչի խոզանակ | հատ | 20000 |
| 264 | Ջրի ցողիչ | հատ | 20000 |

| | | | |
|---|---|---|---|
| 265 | Փողրակ ջրի ցողիչի | հատ | 5000 |
| 266 | Յակաառևանգման մեխանիզմ | հատ | 50000 |
| 267 | Ամբարձիչ առջևի դռան | հատ | 52000 |
| 268 | Ամբարձիչի էլ. շարժիչ առջևի դռան | հատ | 90000 |
| 269 | Ամբարձիչի էլ. շարժիչ հետևի դռան | հատ | 90000 |
| 270 | Ամբարձիչ հետևի դռան | հատ | 52000 |
| 271 | Դիմապակի | հատ | 120000 |
| 272 | Յարվածամեղմիչ բեռնախցիկի | հատ | 25000 |
| 273 | Բամպեր առջևի | հատ | 168000 |
| 274 | Բամպեր հետևի | հատ | 183000 |
| 275 | Բեռնախցիկ | հատ | 394000 |
| 276 | Դուռ առջևի | հատ | 337000 |
| 277 | Դուռ հետևի | հատ | 337000 |
| 278 | Դռան պաստառ | հատ | 186000 |
| 279 | Փական բեռնախցիկի | հատ | 30000 |
| 280 | Փական կապոտի | հատ | 30000 |
| 281 | Էլ/կոճակ | հատ | 40000 |
| 282 | Դռների էլ/փական | հատ | 40000 |
| 283 | Պակտրոնիկ համակարգ | հատ | 50000 |
| 284 | Ալեհավաք | հատ | 20000 |
| 285 | Անվածածկոցի պաշտպանիչ առջևի | հատ | 30000 |
| 286 | Անվածածկոցի պաշտպանիչ հետևի | հատ | 33000 |
| 287 | Յայելի ներսի | հատ | 78000 |
| 288 | Յայելի կողային | հատ | 133000 |
| 289 | Յագոց | հատ | 212000 |
| 290 | Կալունակ բամպերի | հատ | 20000 |
| 291 | Ռետին առջևի դռան ապակու | հատ | 70000 |
| 292 | Ռետին հետևի դռան ապակու | հատ | 70000 |
| 293 | Պաշտպանիչ անձրևի և քամու | հատ | 30000 |
| 294 | Ռետին առջևի դռան | հատ | 30000 |
| 295 | Ռետին հետևի դռան | հատ | 30000 |
| 296 | Մոլդինգ դռան ապակու առջևի | հատ | 40000 |
| 297 | Մոլդինգ դռան ապակու հետևի | հատ | 40000 |
| 298 | Բռնակ առջևի դռան ներսի | հատ | 80000 |
| 299 | Բռնակ հետևի դռան ներսի | հատ | 80000 |
| 300 | Բռնակ առջևի դռան դրսի | հատ | 60000 |
| 301 | Բռնակ հետևի դռան դրսի | հատ | 60000 |
| 302 | Ռետին բեռնախցիկի | հատ | 20000 |
| 303 | Առջևի դռան ապակի | հատ | 36000 |
| 304 | Յետևի դռան ապակի | հատ | 40000 |
| 305 | Յետևի հողմապակի | հատ | 110000 |
| 306 | Առջևի դռան սահմանափակիչ | հատ | 13000 |
| 307 | Յետևի դռան սահմանափակիչ | հատ | 13000 |
| 308 | Ապակիների մգեցման թաղանթ 1մետր քառակուսի | հատ | 10000 |
| 309 | Երեսպատիչ | հատ | 60000 |

| | | | |
|---|---|---|---|
| 310 | Ծխնի առջևի դռան | հատ | 30000 |
| 311 | Ծխնի հետևի դռան | հատ | 30000 |
| 312 | Ծխնի կապոտի | հատ | 20000 |
| 313 | Ցայտապաշտպանիչ | հատ | 10000 |
| 314 | Արևիկ | հատ | 40000 |
| 315 | Ռետինե գորգեր սրահի | հատ | 35000 |
| 316 | Անվակունդի թասակ | հատ | 60000 |
| 317 | Ամրակ | հատ | 1000 |
| 318 | Հեղույս | հատ | 3000 |
| 319 | Համարանիշի տակդիր | հատ | 3000 |
| 320 | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *1 մ/քառ վերանորոգման համար* | հատ | 30000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի
Գլխավոր վարչության
ք. Երևան 42 ,Զվարթնոցե օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011207082
Ա. Անունկյան

---------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
,Չեխ ԱՎՏՈՆ ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 67/3
<<Անելիք Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11816000080800
ՀՎՀՀ 02250353
Մ. Մովսեսյան

---------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 2*
*<< 16 >> [illegible] 2018թ. կնքված*
*N ՔԱԳՎ-ՄԱԾՁԲ-06/18 ծածկագրով գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/1 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | ---- | ---- | 69510 | 243285 | 243285 | 243285 | 417060 | 417060 | 417060 | 695100 | 659100 | 695100 | 695100 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի
Գլխավոր վարչության
ք. Երևան 42 ,Զվարթնոցե օ/կ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011207082
Ա. Մանուկյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
,ՉԵԽ ԱՎՏՈՒ ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 67/3
<<Անելիք Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11816000080800
ՀՎՀՀ 02250353
Մ. Մովսեսյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 3*
*<<____>> _____________2018թ. կնքված*
*N ՔԱԳՎ-ՄԱԾՁԲ-06/18 ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ ___________________________

______________________________

հվհհ _________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ___________________________

______________________________

հվհհ_________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «              » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
*Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________________ և*
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացություններն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*<<____>> ______________2018թ. կնքված*
*N ՔԱԳՎ-ՄԱԾՁԲ-06/18 ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և

(Պատվիրատուի անունը)

-------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------------

(Կատարողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
*Ավտոմեքենայի ձեռքբերում*

**N <<ՔԱԳՎ(1)-ՇՀԱՊՁԲ-11/21>>**

ք. Երևան <<14>> 05 2013թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ս. Հակոբյանի, որը գործում է «ՀՀ ԿԱ ՔԱԳՎ աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության համաձայն, (այսուհետև՝ **Գնորդ**), մի կողմից և <<Չեխ Ավտո>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Աշոտ Մովսեսյանի (այսուհետև՝ վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1.Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ավտոմեքենաները(2 հատ) (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. Մատակարարման պայմանները

2.1. Վաճառողն ապրանքը հասցնում է գնորդին:

2.2. Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է 30 աշխատանքային օր:

## 3.Կողմերի իրավունքները և պարտականությունները

***3.1 Գնորդն իրավունք ունի՝***

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից Ապրանքը չմատակարարվելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի N1 Հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը:

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի

գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

### *3.2 Գնորդը պարտավոր է՝*

3.2.1 Կատարել սույն Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունները հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

### *3.3 Վաճառողն իրավունք ունի՝*

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

### *3.4 Վաճառողը պարտավոր է՝*

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, քանակով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4.Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ***19 200 000 (տասնինը միլիոն երկու հարյուր հազար)*** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ ***3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար)*** ՀՀ դրամ: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավոր գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի Գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները :

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Ապրանքի համար երաշխիքային ժամկետ է սահմանվում գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 2 (երկու) տարին՝ առանց վազքի սահմանափակման: Երաշխիքային սպասարկման պայմաններ են հանդիսանում մեքենայի շարժիչի յուղի և զտիչի փոխումը մատակարարի սպասարկման կետում, ինչպես նաև ձմեռային անվադողերի ձեռքբերումը մատակարարից:

5.3 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այնուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցներըը,

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7 Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 %-ի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 %-ի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 %-ի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների լրիվ կատարումից:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ_ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ

են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:
9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:
9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռքբերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքների մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.
9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (կատարող և (կամ) պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:
9.5Սույն պայմանգրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6Սույն պայամանգիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1,2,3 և 4 հավելվածները՝ բաղկացած ------էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանգրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**«Գնորդ»**

**ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի**
**Գլխավոր վարչություն**
**Երևան 42 <<Զվարթնոց>> օկ**
**ՀՎՀՀ 01204231**
**ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011207082, 900013207023**
**Աշխատակազմի ղեկավար**
**Ս. Հակոբյան ____________________**

**«Վաճառող»**

**<< Չեխ Ավտո>> ՍՊԸ**
**Արշակունյաց 67/3**
**<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ**
**Հ/Հ 1150010659250100**
**ՀՎՀՀ 02250353**

**Տնօրեն**
**Ա. Մովսեսյան ____________________**

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

2013թ.-ի նոյեմբերի <<14>>-ի թիվ ՔԱԳՎ(1)- ԾՀԱՊՁԲ-11/21պայմանագրի

ք.Երևան «14» նոյեմբեր 2013թ.

## Գնման առարկայի բնութագիր

| Գնման առարկան | Չափման միավորը, քանակը | Տեխնիկական բնութագիրը | | Միավորի գինը, ներառյալ ԱԱՀ | Ապրանքի մատակարարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| Ավտոմեքենա | Հատ 2 | Նստատեղերի քանակը | 5 | 9 600 000 | Պայմանագրի կնքումից հետո 30 աշխատանքային օր |
| | | Դռների քանակը | 5 | | |
| | | Թափքի տեսակը | լիֆտբեք | | |
| | | Գույնը | սև մետալիկ/կապույտ մետալիկ | | |
| | | Երկարությունը, մմ | 4483 | | |
| | | Լայնությունը, մմ | 1706 | | |
| | | Բարձրությունը, մմ | 1461 | | |
| | | Ճանապարհային բարձրությունը (клиренс), մմ | 143 | | |
| | | Ավտոմեքենայի լրիվ քաշը, կգ | 1230 | | |
| | | Բեռնախցիկի ծավալը, լ, նստատեղերը փակ/բաց | 550/1490 | | |
| | | Վառելիքի բաքի տարողունակությունը, լ | 55 | | |
| | | Շարժիչի աշխ. ծավալը, խորանարդ սմ | 1.4 | | |
| | | Մխոցների դասավորությունը/քանակը | շարային, 4 | | |
| | | Կափույրների/փականների քանակը | ընդամենը 16 | | |
| | | Սնուցման համակարգը | անմիջական ներցայտմամբ, տուրբո ներմղիչով | | |
| | | Շարժիչի հզորությունը KW/ձիաուժ | 122 ձիաուժ | | |
| | | Վառելիքի տեսակը | բենզին | | |
| | | Վառելիքի ծախսը, խառը լ | 5.8 | | |
| | | Վառելիքի ծախսը քաղաքային ռեժիմում, լ | 7.4 | | |
| | | Վառելիքի ծախսը քաղաքից դուրս, լ | 4.8 | | |
| | | Փոխանցման տուփը/աստիճանների քանակը | Ավտոմատ, 7 աստիճան | | |
| | | Քարշակումը | առջևի | | |
| | | Ղեկանիվը | էլեկտրա-հիդրոուժեղարարով | | |
| | | Առջևի արգելակման համակարգը | սկավառակային և հովացումով | | |
| | | Ետևի արգելակման համակարգը | սկավառակային | | |
| | | Արգելակման հակաբլոկավորման համակարգը | ABS | | |
| | | Արգելակման ուժի բաշխման | EBC, MBA, ESBS | | |

| | |
|---|---|
| համակարգերը | |
| Հակաբաքսման համակարգ | ASR |
| Անվտանգության բարձիկներ | 2 |
| Կողային հայելիները | տաքացվող և էլ. կառավարվող |
| Ապակիները | արևապաշտպանիչ |
| Կողային ապակիների ամբարձիչները | բոլորը էլեկտրակառավարմամբ |
| Հետևի ապակին | տաքացվող/պարույրով |
| Առջևի ապակու լվացման համակարգը | տաքացվող |
| Սրահի ջերմակարգավորման համակարգը | կոնդիցիոներ |
| Ետևի նստատեղերը | ծալվող |
| Լրացուցիչ լուսարձակներ | առջևի հակամառախուղային |
| Մեքենայի կառավարման համակարգը | բորդ համակարգիչ, MFA |
| Սրահը | կտորից,սև |
| Աուդիոհամակարգը | Աուդիոհամակարգ |
| Աուդիոնախապատրաստում | Ալեհավաք/անտեննա |
| Բարձրախոս | 4 |
| Հակաառևանգման ծայնաազդանշանային համակարգը | կենտրոնացված փականով և հեռակառավարմամբ, SAFE համակարգ |
| Անվասկավառակի չափսերը, դույմով | այումինե 15 |
| Անվադողերի չափսերը | առնվազն 185/60 |
| Պահեստային անիվը | լիարժեք, ոչ ժամանակավոր |
| Կատարած վազքը, կմ | մինչև 50կմ |
| Արտադրման տարեթիվը | 2013թ. |
| Երաշխիքը | 2 տարի առանց վազքի սահմանափակման |
| Հետերաշխիքային սպասարկումը | Գնորդի կողմից դիմելու դեպքում իրականացվում է Վաճառողի կողմից երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտից հետո տվյալ պահին Վաճառողի մոտ գործող գներից 7%-ով ցածր: |

Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքի չօգտագործված լինելը:

**«Գնորդ»**

ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի
Գլխավոր վարչություն
Երևան 42 <<Զվարթնոց>> օկ
ՀՎՀՀ 01204231
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011207082, 900013207023
Աշխատակազմի ղեկավար
Ս. Հակոբյան ____________

**«Վաճառող»**

<< Չեխ Ավտո>> ՍՊԸ
Արշակունյաց 67/3
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150010659250100
ՀՎՀՀ 02250353
Տնօրեն
Ա. Մովսեսյան____________

«ՉԵԽ ԱՎՏՈ» «CZECH AUTO» «ЧЕХ АВТО» 02250353

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

2013թ.-ի Մայիսի <<14>>-ի թիվ ՔԱԳՎ(1)- ՇՀԱՊՁԲ-11/21պայմանագրի

Գնման-Ժամանակացույց

| Ապրանքների մատակարարման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | Ավարտը |
| Պայմանագրի ստորագրման պահից | 30 աշխատանքային օր |

*«Գնորդ»*

**ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի**
**Գլխավոր վարչություն**
**Երևան 42 <<Զվարթնոց>> օկ**
**ՀՎՀՀ 01204231**
**ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011207082, 900013207023**
**Աշխատակազմի ղեկավար**
**Ս. Հակոբյան** ________________

*«Վաճառող»*

**<< Չեխ Ավտո>> ՍՊԸ**
**Արշակունյաց 67/3**
**<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ**
**Հ/Հ 1150010659250100**
**ՀՎՀՀ 02250353**

**Տնօրեն**
**Ա. Մովսեսյան** ________________

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

2013թ.-ի մայիսի <<14>>-ի թիվ ՔԱԳՎ(1)- ՇՀԱՊՁԲ-11/21պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2013թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | | - | - | - | - | - | 19 200 000 | - | - | - | - | - | - | 19 200 000 |

*Ապրանքը վաղաժամկետ մատակարարելու դեպքում վճարումն իրականացվում է հանձնման – ընդունման արձանագրության երկկողմ ստորագրման պահից՝ 5 (հինգ)բանկային օրվա ընթացքում:

**«Գնորդ»**

**ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի**
**Գլխավոր վարչություն**
**Երևան 42 <<Զվարթնոց>> օկ**
**ՀՎՀՀ 01204231**
**ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011207082, 900013207023**
**Աշխատակազմի ղեկավար**
**Ս. Հակոբյան** ____________

**«Վաճառող»**

**<< Չեխ Ավտո>> ՍՊԸ**
**Արշակունյաց 67/3**
**<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ**
**Հ/Հ 1150010659250100**
**ՀՎՀՀ 02250353**

**Տնօրեն**
**Ա. Մովսեսյան** ____________

«CZECH AUTO» «ЧЕХ АВТО» 02250353

*Հավելված 4*
*2013թ.-ի ___________ << >>-ի թիվ ------ պայմանագրի*

ք.Երևան «__» __________ 2013թ.

| Գնորդ | Վաճառող |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| հասցե________________ | հասցե________________ |
| հհ__________________ | հհ__________________ |
| ____________________ | ____________________ |
| հվհհ________________ | հվհհ________________ |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<__>> <<_________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ <<____________________>> ։

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<__ >> <<____________>> 20 թ.

(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն, ի դեմս_______________________________________ և Կատարողը՝ ի դեմս_______________________________________, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի (Համաձայնագրի) կատարման վերաբերյալ <<___>> <<_________>> 20 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք) համապատասխանում են պայմանագրով (Համաձայնագրով) ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Կատարողը <<__>> <<_________>> 20 թ-ից <<__>> <<_________>> 20 թ. ընկած ժամանակահատվածում մատակարարվել են հետևյալ ապրանքները.

| Մատակարարման համառոտ նկարագիրը | Մատակարարման քանակական ցուցանիշները | Մատակարարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------ | ------------ | | --------- |

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ապրանքը հանձնեց** **Ապրանքը ընդունեց**

ստորագրություն ստորագրություն

Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կարիքների համար 2013 թվականի մայիսի 14-ին ՔԱԳՎ(1) – ՇՀԱՊՁԲ-11/21 պայմանագրի համաձայն ձեռք են բերվել 2 հատ SKODA RAPID ավտոմեքենաներ:

Գլխավոր հաշվապահ Ա. Ազիզյան